

Գ ի Ր
ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ
ԱՌ ՀՈԳՇ. Տ. ՅՈՒՍԻԿ Ժ. ՎՐԴ. ՊԱՂՏԱՍԵԱՆ

Հոգեկան մեծ գոհունակութեամբ կը տեղեկանանք որ Լիվինկսթրնի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ ծխական խորհուրդը այսօր կը պատուէ ձեզ՝ համայնքին մատուցած ձեր անսակարկ եւ նուիրեալ ծառայութեանց առ ի երախտագիտութիւն:

Մենք եւս կրնանք վկայել որ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ համայնքի կազմակերպման եւ եկեղեցաշինական աշխատանքներուն ի նպաստ ձեր բերած օժանդակութիւնը մեծապէս օգտակար եղած է: Ձեր ջանքերով եւ առաջնորդութեամբ ծուխի երիտասարդները աւելի հետաքրքրութիւն ցոյց կու տան Եկեղեցւոյ հանդէպ, եւ իրենց ժամանակն ու կարողութիւնները կը տրամադրեն Եկեղեցւոյ կարիքներուն եւ կրօնական պաշտամունքներուն:

Ձեր պատանեկութեան տարիներէն ձեր հետաքրքրութիւնը եւ ծառայութեան ոգին ամեր է ձեզի հետ, եւ բարի օրինակ ձպոպայեր է շատերուն:

Որպէս Առաջնորդ Ամերիկայի Հայոց՝ կը գնահատենք աստուածահաճոյ, եկեղեցանդէր ու ազգանուէր ձեր գործունէութիւնը, կ'օրհնենք ձեզ ու ձեր հարազատները՝ բոլորիդ մաղթելով հոգիի ու մարմնի առաւել առողջութիւն եւ երկար կեանք:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ

Մայիս 22, 1982 - նիւ Եորք, Ն.Ե.